ՏԱԹԵՎԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Հայ-Ռուսական համալսարանի ասպիրանտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԳԵԼՔՆԵՐԸ

Վերջին տարիներին Հայաստանը զգալի արդյունքների է հասել ձեռներեցության արդյունավետությանը նպաստող իրավական դաշտի ձևավորման հարցում: Այնուամենայնիվ, ներկայումս մեր երկրի հաջողությունները օտարերկրյա ուղղակի ներդրումներ ներգրավելու առումով բավական համեստ են: Հոդվածում վերլուծվում է Հայաստանի ներդրումային միջավայրի արդի վիճակը, ուսումնասիրվում են Կառավարության ձեռնարկած գործողությունները ներդրումային բարենպաստ պայմաններ ապահովելու ուղղությամբ, բացահայտվում են ներդրումային ավելի մեծ հոսքեր ունենալուն խոչընդոտող հիմնական գործոնները, մասնավորապես՝ ՀՀ ներքին շուկայի փոքրությունը, անվճարունակ բնակչությունը, արտաքին առևտրային կապեր զարգացնելու դժվարությունը, սփյուռքի կողմից Հայաստանի նկատմամբ ունեցած վստահության պակասը:

Հիմնաբառեր. *ներդրումային միջավայր, մրցունակություն*
JEL: E4, E22, E29

Անցումային տնտեսությանը բնորոշ են որոշակի հատկանիշներ, որոնք այն տարբերում են սեփական ուժերով զարգացող կայուն տնտեսությունից: Սեփական ռեսուրսների սակավության պատճառով շուկայական վերադասավորման պայմաններում անցումային տնտեսության համար հատկապես կարևորվում է հատուկ քաղաքականության իրականացումը, որի հիմքում ոչ միայն ներքին, այլև արտաքին ներդրողների ակտիվության խթանումն է:

Վերջին տարիներին Հայաստանը զգալի արդյունքների է հասել ձեռներեցության արդյունավետությանը նպաստող իրավական դաշտի ձևավորման հարցում:

Այդ մասին են վկայում Համաշխարհային բանկի կողմից ամեն տարի հրապարակվող «Գործարարություն» (Doing Business) զեկույցի տվյալները (գծանկար 1):



Աղբյուրը՝ *կազմել է հեղինակը Համաշխարհային բանկի տվյալների բազայի հիման վրա. http://www.doingbusiness.org*

Գծանկար 1. ***Հայաստանի «հեռավորություն սահմանագծից» (DTF) ցուցանիշի արժեքները***[1]

Համաձայն 2014–2015 թթ. «Գործարարություն» զեկույցի՝ Հայաստանը աշխարհում զբաղեցնում է 35-րդ տեղը ձեռներեցությամբ հեշտությամբ զբաղվելու գնահատականով: Հարևանությամբ Ճապոնիան է (34-րդ տեղ) և Չեխիան (36-րդ տեղ)[2]: Հայաստանում հատկապես արդյունավետ են կիրառվում միջազգային առևտուրը կարգավորող (այս արդյունքին երկիրը հասել է ԵՏՄ-ին անդամակցելուց ի վեր), ինչպես նաև շինարարության թույլտվությունը կարգավորող և պայմանագրի կատարումը երաշխավորող իրավական նորմերը: Արդյունքում՝ Ռուսաստանի հետ առևտրային հարաբերություններում զգալիորեն նվազել են ժամանակային և գումարային արգելքները: Պայմանագրերի կատարման երաշխավորման ոլորտում ամենակարևոր նորամուծությունը, որ նվազեցնում է կոռուպցիոն ռիսկերը, դատական փաստաթղթաբանության մեքենայացման նախագծի ներդրումն է: Վերջինս պայմաններ է ստեղծում առաջին ատյանի երևանյան դատարանում գործերի ոչ կամայական բաշխումն ապահովելու համար: Շինարարություն սկսելու թույլտվություն ստանալու հարցում կարևորագույն բարեփոխումը ռիսկի ցածր շեմ ունեցող նախագծերի ճարտարապետական մանրակերտի՝ անկախ փորձագետի կողմից հաստատման պահանջի վերացումն է:

Համաձայն Համաշխարհային տնտեսական ֆորումի գլոբալ մրցունակության վարկանշային զեկույցի, որտեղ վերլուծվում է աշխարհի երկրների մրցունակությունը 2015–2016 թթ. ժամանակահատվածում, ֆինանսական շուկայի զարգացման մակարդակը, ապրանքների ու ծառայությունների շուկայի արդյունավետությունը, կազմակերպությունների մրցունակությունն ու հաստատությունների որակը Հայաստանում ավելի բարձր են, քան ԱՊՀ մյուս երկրներում[3]:

---

[1] Տե՛ս 2010–2016 թթ. «Գործարարություն» զեկույցներ:
[2] Տե՛ս Doing Business 2016. Measuring Regulatory Quality and Efficiency. A World Bank Group Flagship Report, էջ 5:
[3] Տե՛ս World Economic Forum, “The Global competitiveness report 2015-2016”, Geneva, 2015:

Համաշխարհային համեմատականների առումով, Հայաստանի սոցիալ-տնտեսական համակարգի մրցակցային առավելությունների շարքին են դասվում նոր իրավաբանական անձ գրանցելու գործընթացի հեշտությունն ու կարճ ժամկետները, շահութահարկի ցածր դրույքը, աշխատանքի ընդունելու և աշխատանքից ազատելու արդյունավետ գործընթացը, ինչպես նաև ՄԻԱԿ/ՉԻԱՀ-ի տարածվածությունը:

Այսօր ապրանքների ու ծառայությունների մեծ մասը սպառողին է հասնում օտարերկրյա մասնաճյուղերի և դուստր ձեռնարկությունների միջոցով: 80 հազարից ավելի մասնաճյուղեր տնօրինում են ավելի քան 97 տրիլիոն ԱՄՆ դոլարին համարժեք ակտիվներ, տարեկան իրացնում են ավելի քան 34 տրիլիոն ԱՄՆ դոլարին համարժեք ապրանք, արտադրում են 7 տրիլիոն ԱՄՆ դոլարին համարժեք ավելացված արժեք[4]: Ամբողջ աշխարհում միջազգային մասնաճյուղերը ստեղծում են առավել քան 71 միլիոն աշխատատեղ[5]: Այս առումով հատկանշական է, որ վերջին տարիներին հստակ ուրվագծվում է ուղղակի օտարերկրյա ներդրումների հոսքի աճը դեպի զարգացող երկրներ: 2014 թվականին ներգրավված ուղղակի օտարերկրյա ներդրումների ծավալի վարկանշային աղյուսակի առաջատար տասը երկրներից հինգը՝ Չինաստանի գլխավորությամբ, համարվում են զարգացող երկրներ[6]: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանը նույնպես զարգացող երկիր է, ստեղծված իրավիճակը ձևավորում է բարենպաստ պայմաններ նաև մեր երկրի՝ համաշխարհային տնտեսությանն ավելի հիմնովին միասնանալու համար:

Ըստ այդմ՝ ուղղակի օտարերկրյա ներդրումներ ներգրավելու, արտահանման հնարավորությունները մեծացնելու և նոր աշխատատեղեր ստեղծելու նպատակով ՀՀ Կառավարության որոշմամբ ստեղծվել են ազատ տնտեսական գոտիներ: Նախագծի իրավական հիմքը 2011 թվականին ընդունված «Ազատ տնտեսական գոտիների մասին» ՀՀ օրենքն է, որը ազատ տնտեսական գոտու սահմաններում գործող իրավաբանական անձանց և անհատ ձեռներեցների համար նախատեսում է հարկային արտոնություններ՝ ԱԱՀ-ից, շահութահարկից, գույքահարկից և մաքսային տուրքերից ազատելու առումով: Ներկայումս Հայաստանի տարածքում իրենց գործունեությունն են ծավալում երկու ազատ տնտեսական գոտիներ՝[7] Այլանսը և Մերիդիանը:

Օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավմանն է նպատակաուղղված նաև իրավական համակարգի կատարելագործումը, մասնավորապես՝ «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքի ընդունումը: Համաձայն այդ օրենքի՝ օտարերկրյա ներդրումները ենթակա չեն ազգայնացման և բռնագրավման, իսկ դրանց վերաբերող իրավական ռեժիմը չի կարող պակաս բարենպաստ լինել, քան ներքին ներդրողի համար[8]: Օտարերկրյա ներդրողի

---

[4] Տե՛ս Համաշխարհային բանկի խումբ. «Ներդրումային բարեփոխումների քարտեզ. Հայաստան. վերլուծական հաշվետվություն ՀՀ էկոնոմիկայի նախարարության համար», էջ 6/79, http://www.mineconomy.am/uploades/Investment_Reform_Map_AnalyticalReport_Arm.pdf

[5] Տե՛ս նույն տեղը:

[6] Տե՛ս UNCTAD, World Investment Report 2015, New York and Geneva, 2015, էջ 10, http://unctad.org/en/PublicationsLibrary/wir2015_en.pdf

[7] Տե՛ս ՀՀ էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայք, Գործող ազատ տնտեսական գոտիներ, վերջին դիմումը՝ 14.05.2016. http://www.mineconomy.am/arm/23/text.html

[8] Տե՛ս «Հայաստանի Հանրապետության օրենքը օտարերկրյա ներդրումների մասին»՝ ընդունված 31.07.1994: Բաժին 2. Օտարերկրյա ներդրումների պաշտպանության պետական երաշխիքները: http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1552#2

կողմից որպես կանոնադրական կապիտալ ՀՀ տարածք ներկրած գույքը, ինչպես նաև սեփական արտադրության համար նախատեսված գույքը, ազատվում են մաքսային տուրքերից:

Չնայած ձեռնարկված քայլերին, ներկայումս Հայաստանի հաջողությունները օտարերկրյա ուղղակի ներդրումներ ներգրավելու առումով բավականին համեստ են: Ըստ գծանկար 2-ի՝ 2001–2008 թվականներին օտարերկրյա ուղղակի ներդրումների զուտ հոսքը դեպի Հայաստան աճել է (առավելագույն ցուցանիշն արձանագրվել է 2008 թվականին՝ 943,7 մլն դոլար): Սակայն համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո իրավիճակը հիմնովին փոխվեց, և 2014 թվականին ներգրավված զուտ ներդրումների ծավալը կազմեց ընդամենը 404,3 մլն դոլար, ինչը 13%-ով պակաս է 2006 թվականի արդյունքից (466,5 մլն), իսկ 2015 թվականին էլ ավելի իջավ՝ կազմելով ընդամենը 180.5 մլն դոլար:



Աղբյուրը՝ կազմել է հեղինակը Համաշխարհային բանկի տվյալների բազայի հիման վրա. www.worldbank.org

Գծանկար 2. ***ՀՀ օտարերկրյա ուղղակի ներդրումների զուտ հոսքը, մլն դոլար, 1993–2015 թթ.***



Աղբյուրը՝ կազմել է հեղինակը www.tradingeconomies.com տվյալների բազայի հիման վրա

Գծանկար 3. ***Կապիտալի հոսքը դեպի Հայաստան, մլն դոլար, 2006–2016 թթ.***

Ավելին, ըստ գծանկար 3-ի, երկրից կապիտալի արտահոսք կա: Չնայած արտասահմանից ներգրավված ներդրումներին, Հայաստանի կապիտալի հոսքի զուտ ցուցանիշը հիմնականում բացասական է (ամենամեծ արտահոսքը արձանագրվել է 2009 թվականի առաջին եռամսյակում՝ 705,7 մլն դոլար): Ելնելով այն փաստից, որ ՀՀ-ից կապիտալը հիմնականում ուղղվում է գաղտնիության բարձր աստիճան ապահովող հայտնի օֆշորային գոտիներ (2015 թվականին հիմնականում Կիպրոս և Վիրջինյան կղզիներ), կարելի է ենթադրել, որ դա ունի անօրինական ծագում: Հայաստանից արտահոսք է դիտարկվում նաև Վրաստանի ուղղությամբ, ինչը բացատրվում է հարևան երկրում ձեռներեցության համար ավելի նպաստավոր պայմանների ու առավել գրավիչ հարկային դաշտի առկայությամբ[9]:

[9] Տե՛ս **Багратян Г.,** Интервью информационно-аналитическому агентству ARMENIA Today: “Отток капитала из Армении в Грузию может составлять порядка $250-300 млн”, 15.02.2011. http://armtoday.info/default.asp, дата последнего обращения: 02.06.2016.

ՀՀ տնտեսության մեջ ներդրումների մեծ հոսք ապահովելու հիմնական խոչընդոտներից մեկը ՀՀ ներքին շուկայի չափազանց փոքր լինելն է, ինչպես նաև արտաքին առևտրային կապեր զարգացնելու դժվարությունը[10]: Ներքին շուկայի փոքրությունը կապված է բնակչության թվի (3 մլն մարդ՝ ՀՀ ԱՎԾ 2014 թվականի տվյալների համաձայն[11]) և գործազրկության բարձր մակարդակի պատճառով վերջինիս անվճարունակության հետ (2014 թվականի տվյալներով գործազուրկների տեսակարար կշիռը տնտեսապես ակտիվ բնակչության մեջ առավելագույնն է եղել ԱՊՀ երկրների շարքում՝ 17,6%[12]): Միևնույն ժամանակ, շուկայի ծավալը կարևորագույն դեր է խաղում մրցունակության պահպանման հարցում:

Հայտնի է, որ զարգացման բարձր մակարդակ ունեցող փոքր երկրներում արտահանման տեսակարար կշիռը ՀՆԱ-ում պետք է կազմի ոչ պակաս, քան 30%,[13] իսկ Հայաստանում, ՀՀ ԱՎԾ տվյալներով, 2014 թվականին կազմել է 13: Միևնույն ժամանակ, ներքին փոքր շուկա ունենալու պայմաններում հենց արտահանման ընդլայնումն է դառնում տնտեսության զարգացման խթան: Մյուս կողմից՝ ՀՀ ներգրավված օտարերկրյա ուղղակի ներդրումների ոլորտի վերլուծությունը ցույց է տալիս, որ վերջիններս ուղղված չեն երկրի արտահանման ներուժի ավելացմանը: Առաջատար ոլորտները՝ հեռահաղորդակցություն (113,08 մլն դոլար), անշարժ գույք (45,98 դոլար) և հանքարդյունաբերություն (30,27 դոլար), ըստ էության, գիտական հիմք և արտահանման ներուժ չունեն:

Ի տարբերություն «Գործարարություն» զեկույցի, Գլոբալ մրցունակության 2015–2016 թթ. զեկույցի համաձայն, ՀՀ-ում ձեռներեցությամբ զբաղվելիս տնտեսավարող սուբյեկտները հանդիպում են մի շարք այլ դժվարությունների: Դրանցից են ֆինանսական ռեսուրսների հասանելիության պակասը (13,5%), կառավարչական բյուրոկրատիան (11,2%), աշխատուժի կրթության մակարդակի անհամապատասխանությունը (10,8%), արտարժույթի փոխարժեքի կարգավորումը (10,8%) և կաշառակերությունը (10,1%)[14]: Ձեռներեցության տեսանկյունից առավել խնդրահարույց են հանցավորության բարձր մակարդակը, հասարակական առողջության ապահովման համակարգի թերությունները և իշխանության անհարատևությունը:

Հարկ է նաև նշել, որ Հայաստանի ներդրումային վարկանիշը զգալիորեն տուժում է սփյուռքի՝ երկրի նկատմամբ ունեցած վստահության պակասի պատճառով: Դրա վառ ապացույցն է այն փաստը, որ, չնայած տարեցտարի օտարերկրյա մասնավոր տրանսֆերտների տեսքով ՀՀ են ուղղվում միլիոնավոր դոլարներ (գծանկար 4), երբ խոսքը վերաբերում է Հայաստանի և սփյուռքի կապիտալների համատեղ կիրառություն ենթադրող ներդրումային մոդելների կառուցմանը, պատկերը կտրուկ փոխվում է:

---

[10] Տե՛ս Институт экономики РАН, Социально-экономическое развитие постсоветских стран: итоги двадцатилетия. М., 2012, էջ 192:

[11] Տե՛ս Հայաստանի վիճակագրական տարեգիրք-2015, միջազգային համեմատություններ, էջ 550, http://armstat.am/file/doc/99493718.pdf

[12] Տե՛ս նույն տեղը, էջ 555:

[13] Տե՛ս Пороги чувствительности постсоветской экономики. М., “Мир перемен”, N2, 2013, էջ 2, http://www.noravank.am/upload/pdf/Mir%20peremen%202013%20N2.%20Tavadyan.pdf

[14] Տե՛ս World Economic Forum, “The Global competitiveness report 2015-2016”, Geneva, 2015, էջ 98:



Աղբյուրը՝ կազմել է հեղինակը ՀՀ ԿԲ տվյալների բազայի հիման վրա. արտաքին հատվածի վիճակագրություն, www.cba.am

Գծանկար 4. ***2004–2015 թթ. Հայաստան ուղղված օտարերկրյա մասնավոր տրանսֆերտներ***

Սփյուռքի կողմից երկրի նկատմամբ վստահության պակասը վկայում է այն մասին, որ Հայաստանի ներկայիս տնտեսական մոդելը չի ապահովում տնտեսական միջավայրի թափանցիկություն, հիմնված չէ բոլոր տնտեսավարող սուբյեկտների գործունեությունը կանոնակարգող միևնույն պայմանների վրա և, վերջին հաշվով, չնայած Կառավարության ձեռնարկած միջոցներին, նպատակաուղղված չէ արտաքին ներդրողի հաջողության ապահովմանը: Վերոհիշյալը հաշվի առնելով՝ դժվար է արդյունավետ համագործակցություն ակնկալել արտաքին ներդրողների, այդ թվում՝ սփյուռքի հետ:

Օգտագործված գրականություն

1. «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքը՝ ընդունված 31.07.1994: Բաժին 2. Օտարերկրյա ներդրումների պաշտպանության պետական երաշխիքները: http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1552#2
2. ՀՀ էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայքէջ: Գործող ազատ տնտեսական գոտիները, վերջին դիմումը՝ 14.05.2016. http://www.mineconomy.am/arm/23/text.html
3. Հայաստանի վիճակագրական տարեգիրք – 2015, միջազգային համեմատություններ. http://armstat.am/file/doc/99493718.pdf
4. Համաշխարհային բանկի խումբ. Ներդրումային բարեփոխումների քարտեզ. Հայաստան. Վերլուծական հաշվետվություններ ՀՀ էկոնոմիկայի նախարարության համար. http://www.mineconomy.am/uploades/Investment_Reform_Map_AnalyticalReport_Arm.pdf
5. Багратян Г., Интервью информационно-аналитическому агентству ARMENIA Today: “Отток капитала из Армении в Грузию может составлять порядка $250-300 млн”, 15.02.2011.http://armtoday.info/default.asp, дата последнего обращения: 02.06.2016.
6. Институт экономики РАН, “Социально-экономическое развитие постсоветских стран: итоги двадцатилетия”, М., 2012.
7. Пороги чувствительности постсоветской экономики, М., “Мир перемен”, N2, 2013. http://www.noravank.am/upload/pdf/Mir%20peremen%202013%20N2.%20Tavadyan.pdf

8. Doing Business 2016. Measuring Regulatory Quality and Efficiency. A World Bank Group Flagship Report.
9. World Economic Forum, The Global competitiveness report 2015-2016, Geneva, 2015.
10. UNCTAD, World Investment Report 2015, New York and Geneva, 2015. http://unctad.org/en/PublicationsLibrary/wir2015_en.pdf
11. World Economic Forum, “The Global competitiveness report 2015–2016”, Geneva, 2015

ТАТЕВИК ОГАНЕСЯН
Аспирант Российско-Армянского университета

Основные препятствия улучшения инвестиционного климата в Республике Армения.– В последние годы Армения добилась значительных результатов в вопросе построения правового поля, способствующего эффективному ведению бизнеса. Тем не менее, в современной действительности успехи нашей страны в вопросе привлечения прямых иностранных инвестиций весьма скромны. В данной статье анализируется современное состояние инвестиционного климата Армении, изучаются действия правительства по обеспечению благоприятного инвестиционного климата, раскрываются основные факторы, мешающие наличию большего инвестиционного потока в страну, а именно – узость внутреннего рынка РА, неплатежеспособное население, сложность развития внешнеторговых связей, недостаток доверия диаспоры к Армении.

Ключевые слова: *инвестиционный климат, конкурентоспособность.*
JEL: E4, E22, E29

TATEVIK HOVHANNISYAN
Post - graduate at the Russian-Armenian University

The Main Obstacles in Improving the Investment Climate in the Republic of Armenia.– In recent years, Armenia has achieved significant results in the construction of a legal framework that contributes to the effective conduct of business. Nevertheless, in modern reality, our country's success in attracting foreign direct investments is very modest. This article analyzes the current state of Armenia's investment climate, examines the government's actions to ensure a favorable investment climate, reveals the main factors that prevent the presence of a larger investment flow into the country, namely, narrowness of the RA internal market, insolvent population, the difficulty of developing foreign trade relations, lack of diaspora s trust to Armenia.

Key words: *investment climate, competitiveness.*
JEL: E4, E22, E29